

ի գնալն առ նա եաղուպին՝ ասէ ցնա միասէլլիմն. քաղաքս քոյ է, և իշխանութիւն իմ ի ձեռս քոյ. այլ խնդրեմ զի ի կառավարելոյ զքաղաքս՝ հովանաւորութիւն քո մի պակասեցի յինէն: Երկրորդ՝ զհաճութեան սորա կախեալ է արկանել կամ նստուցանել զմիասէլլիմն: Երրորդ՝ որչափ ինչ գնան ի պաղտատ թէ դրամքն և թէ այլ ինչ՝ որ հաճութեամբ և ձեռք պարտին գնալ: Չորրորդ՝ առանց հրամանի սորա ոչ կազմի և ոչ գնայ կարաւան ի հալէպ: Հինգերորդ՝ առանց հրամանի սորա ոչ կարէ նաւ մի գնալ ի հնդկաստան, և ոչ նաւն անգղիացոց: Յորժամ հարցանեն անգղիացի նաւապետաց՝ թէ երբ գնայք՝ պատասխանեն՝ եաղուպ գիտէ, նորա հրամանին սպասեմք են: Այս այր թէ պէտեւ այսչափ բարձրացեալ է, բայց կարի իմն խոնարհ է աշխարհօրէն:

Գրամք տեղոյ ըստ որում հասարակօրէն ի գործ ածին են սիքքէն ստամպօլու՝ բաց ի պաղտատու մաղրէն, զոր ֆլուզ անուանեն: Այս ամենաթշուառ ֆլուխ երբեմն բարձրանայ և երբեմն իջանէ ըստ արժողութեան. երբեմն քսան ֆլուզն լինի մին տանիմ, (որ թէպէտ միայն անուն է, բայց հաւասարի կէս փարային ստամպօլի) և երբեմն 15 մին տանիմ, և երբեմն տասն մին տանիմ:...

Ի փետրուարի 8, 1772

ի պասրայ
ընդ հալէպ

Նուաստ ծառայ

Հ. Միքայէլ [Զամչ.]

ՅԷ.

Հ. Պետրոս Զուղայեցի Մարտիկենց Մելգոնեան Աբբահօր յանձնարարութեամբ հմտօրէն կը տեղեկագրէ առ Հ. Միք. Զամչեան՝ Քաղկեդոնի և Հայ ժողովքներու պատմիչներու շուրջ մատենագիտական բազմաթիւ աղբիւրներ:

Ի բաճառոր անդատանի քրտնավաստակ մշակից՝ ըղձացկումը առ ի յիւնեկ դիպել աննամար բարօրութեանց՝ տեսաւ տեսաւ Հայր Միքայէլ վարդապետից ողջոյն իւնդայից

... Երեք ինչ յանձն եղեն ինձ գրել առ վերապատուութիւնդ. մի՛ պատմիչ ժողովոյն քաղկեդոնի. երկրորդ՝ պատմիչ ժողովոցն հայոց. և երրորդ՝ պատմութիւն յովհաննայ պապուհւոյն. զորոց մի ըստ միոջէ ըստ հրամանի Գերարգելոյն գրեցից.

Պատմութիւն ժողովոյն քաղկեդոնի և յաւելեալն ի նա, մեր վ. Հ. Նիկողայոսն էր գրեալ և ոչ ես: Պատմիչք այնր ժողովոյ բազումք են յամենայն ազգս. իսկ ես զոմանս ի մէջ բերից: Ի յոյնս պատմէ եւագր. գիրք Ա. զլ. Ը. ի հայս՝ սահակ մուտ եպիսկոպոսն տայոց՝ որպէս պատմէ վարդապետն վարդան զանձակեցին՝ ի բանն որ յաղագս թղթոյն փօտայ առ տէր զաքարիայ կաթուղիկոս ձագացի: Եւ ի լատինս բազումք ևս և մեր բիւվարտ ի ճառն յաղագս խորհրդոյ մարդեղութեան. վիճ. Գ. զարտուղութիւն պատմական երկրորդ հատուած Ա. յորմէ օրինակեալն է որ առ քեզք կայ: Ժողովոցն հայոց պատմիչք բազումք են: Զժողով սուրբ Լուսաւորչին յէջմիածին. պատմէ տէր յովհաննէս օձնեցին ի պատմութեանն մանազկերտի ժողովոյն: Զարիստակեայն յէջմիածին. կանոնգիրքն: Զմեծին ներսէսին. օձնեցին ի նոյն տեղ՝ տէր յովհաննէս գառնեցին յուրում պատմագրութեան. և կանոնգիրքն: Զմեծին սահակայ յաշտիշատ. օձնեցին ի նոյնն: Զսրբոյն յովսէփայ ի շահապուվանի. կանոնգիրքն: ԶԳիւտայն կամ զմանդակուհուոյն ի դատապարտութիւն գրոցն թէոզօրոսի և դիոզորի. կղեմէս կալանն ի պատմ. հատ. զլ. Ը. հմր. 5. ի յունաց: Զբաբգէնի ի քաղաքու դաշտի օձնեցին ի նոյնն: Զբաբգէնի Բ. ի դվին. սիւնեցին ի թուղթն իւր. տէր յովհաննէս գառնեցին ի նոյնն: Սամուէլ քահանայ կաթուղիկէն անուոյ ի ժամանակագրութեանն իւրում: Եւ կիրակոս վարդապետն Գանձակեցի աշակերտն վանական վարդապետին ի պատմագրութեան իւրում: Զնրսէսի